ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# 2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՏԱՐԵԿԱՆ
# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# 2022

ԵՐԵՎԱՆ 2023

# Բովանդակություն
# 2022

6 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

7 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

17 ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

18 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

22 ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

30 ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

36 ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

41 ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

46 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

53 ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

57 ՖԻՆԱՆՍՆԵՐ

60 ԴՈՆՈՐՆԵՐ ԵՎ ԱԶԱԿԻՑՆԵՐ

## ՎԱՐԴԱՆ ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՀԱԱՀ ռեկտոր

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
սիրելի գործընկերներ:

Հերթական տարին հերթական հաջողության պատմությունը գրանցեց մեր համալսարանի, ըստ էության, ամբողջ համակարգում՝ բոլոր ուսումնական, գիտական եւ հետազոտական ստորաբաժանումներում եւ փորձարարական տնտեսություններում: Տարին ամփոփել ենք որպես ագրոտեխնոլոգիական կրթագիտական գերազանցության կենտրոնի վերափոխման վճռական փուլին անցնելու համար անհրաժեշտ ամբողջական եւ կայացած ենթակառուցվածքային համակարգի պայմաններում, թեեւ վերջինի կատարելագործումը շարունակական գործընթաց է, որն, ի դեպ, թափ է առել նաեւ համալսարանի մարզային մասնաճյուղերում:

2022 թվականի բնութագրիչ առանձնահատկություններից են աշխատանքային կիսամյակի ձեւաչափով փորձնուսուցման նորարարական գաղափարի գործարկումը, կայացումն ու լուրջ հաջողությունը, մարզային դպրոցներում «Ագրոտեխնոլոգիաներ» դասընթացի ներդրման՝ ԿԳՄՍ նախարարության թույլտվությունը, շահառուների լայն հանրության համար իրականացված վերապատրաստման կարճաժամկետ ծրագրերը՝ ագրարային բազմաթիվ մասնագիտությունների գծով, Ագրարայինի, որպես հուսալի գործընկերոջ, բարի համբավի ամրապնդումը միջազգային դոնոր հանրության եւ, որ շատ ուրախալի է՝ հայաստանյան մասնավոր հատվածի տնտեսավարողների շրջանում:

Նորարարական լաբորատորիաների ու կենտրոնների գործարկումից, ար-

տադրության ոլորտի մեր գործընկերների ակտիվ մասնակցությամբ ուսումնական պլանների անընդհատական նորացումից, միջազգայնացման ուղղությամբ ակնհայտ առաջընթացից ոչ պակաս, եթե ոչ առավել, կարեւոր եմ համարում ուսումնառության, դասավանդման եւ գիտությամբ զբաղվելու՝ հիմնովին փոխված միջավայրը: Համազգային, ներառյալ՝ ագրարային եւ կրթական ոլորտների առջեւ ծառացած այսօրվա լուրջ մարտահրավերների պայմաններում այս միջավայրն ու Ագրարայինի նորօրյա համբավը մեծապես օգնում են մեր թիմին, մղում աշխատելու, ստեղծագործելու եւ նվիրվելու երկրի ագրոպարենային համակարգը զարգացնելու ունակ, ագրոտեխնոլոգիական վերջին գիտելիքներին ու հմտություններին տիրապետող մասնագետների պատրաստման մեր առաքելությանը:

Հաշվետու տարին բնութագրական էր նաեւ աշխատաշուկայում պահանջարկված, մրցունակ ու հեռանկարային ագրարային մասնագիտությունների նկատմամբ դիմորդների շրջանում հետաքրքրության նվազման միտումը բեկելուն ուղղված մեր նախաձեռնություններին ի պատասխան պետական քաղաքականության մեջ աննախադեպ նպաստավոր քայլերի ձեռնարկմամբ, որը չի կարող իր պտուղները չտալ ամենամոտ ապագայում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2022 թ. գործունեության հաշվետվությունը մեր գործընկերներին եւ բոլոր հետաքրքրվողներին առարկայական տեղեկություններ կտա ոչ միայն տարվա էական ձեռքբերումների, այլեւ ընթացքի մեջ գտնվող եւ 2023 թ. ընթացքում ակնկալվող նոր բնագծերի մասին:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տարեգրության մեջ 2022-ը հերթական առաջընթացի տարի էր գործունեության բոլոր հիմնական ուղղություններով՝ կրթության որակի բարձրացման, գիտական գործունեության կիրառական արդյունքների ավելացման, գյուղատնտեսության եւ հարակից ոլորտներում գիտասփյուռ-խորհրդատվական, փորձագիտական ներուժի հզորացման: Համալսարանի ամբողջ համակարգում, ներառյալ կրթական եւ գիտահետազոտական մասնաճյուղերում եւ կենտրոններում, գործարկվել են բազմաթիվ նոր ենթակառույցներ:

Հայաստանում եւ արտերկրում շարունակվել է համալսարանի դասախոսների եւ մասնագետների վերապատրաստումների գործընթացը: Հաջողությամբ շարունակվել է ՀԱԱՀ դասախոսների՝ արտերկրում դասավանդման ծրագրերին մասնակցությունը: Շահառուների բազմական խմբերի համար կազմակերպված վերապատրաստման կարճաժամկետ ծրագրերի միջոցով հարյուրավոր նոր աշխատատեղեր են ստեղծվել գյուղատնտեսության, վերամշակման եւ այլ ոլորտների համար: Զուգահեռաբար 2022-ը նշանավորվել է Հայաստանի բուհական համակարգում առաջին անգամ եւ մեծ հաջողությամբ աշխատանքային կիսամյակի նորարարական գաղափարի իրագործմամբ: Դա հնարավոր դարձավ շնորհիվ համախոհ առաջադեմ բազմաթիվ ընկերությունների հետ խիստ արդյունավետ համագործակցության: Այս առումով Ագրոնոմիական ֆակուլտետի աննախադեպ հաջողված փորձը համարժեք շարունակություն ունեցավ մյուս ֆակուլտետներում՝ այդպիսով երկրում սկզբնավորելով արտադրության ոլորտի հետ գործընկերային միանգամայն նոր մշակույթ:

Տարվա համար բնութագրական էր ավագ դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշման այցելությունների թվի եւ նպատակայնության աճը: Համալսարանի ղեկավարության առաջարկով ԿԳՄՍ նախարարությունը թույլատրել է դպրոցներում ներդնել «Ագրոտեխնոլոգիաներ» դասընթացը: 2023 թ. երկու մարզերի մի քանի դպրոցներում կբացվեն առաջին փորձնական ագրոդասարանները, եւ այս փորձը ընդլայնվելու միտում կունենա: Այս նախաձեռնությունը ուղղակիորեն կնպաստի դիմորդների թվի աճին եւ համալսարանի ընդունելության ցուցանիշների բարելավմանը:

Տարվա ընթացքում շինարարական կամ վերակառուցողական վերջին փուլ են հասել եւս մեկուկես տասնյակ նորարարական ենթակառույցներ, որոնք շարք կմտնեն թե մայր բուհում եւ թե մասնաճյուղերում:

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

■ Աշխատաշուկայի պահանջները հաշվի առնելով՝ համալսարանում շարունակվել են ուսումնական պլանների արդիականացման, ուսանողակենտրոն, ժամանակակից ուսումնական միջավայրի ստեղծման, դասախոսների վերապատրաստման, ստարտափ էկոհամակարգերի վարգացման, գիտության առեւտրայնացման գործընթացները:

Որպես կառուցվածքային փոփոխությունների արդյունք՝ վերակազմավորվել են մի շարք ամբիոններ, լուծարվել է ՀԱԱՀ Հեռակա ուսուցման դեպարտամենտը, եւ ուսանողները տեղափոխվել են համալսարանի համապատասխան ֆակուլտետներ՝ հեռակա ուսուցմամբ:

Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով մի շարք աշխատանքներ են կատարվել գործընթացի էլեկտրոնային կառավարման ebuh եւ էլեկտրոնային ուսուցման moodle հարթակներում:

## Փորձուսուցումներ. աշխատանքային կիսամյակ

■ 2022 թ. Ագրարային համալսարանը հայաստանյան բուհական համակարգում առաջին անգամ ներդրեց աշխատանքային կիսամյակ-փորձուսուցում նորարարական գործելակերպը, որը հաջողությամբ իրականացվեց. 177 ուսանող աշխատանքային կիսամյակն անցկացրեց ՀԱԱՀ-ի հետ պայմանագրեր կնքած ավելի քան 60 կազմակերպություններում: Ուսանողներից շատերը աշխատանքային փորձուսուցման ընթացքում վարձատրվել են, իսկ 58 %-ը փորձուսուցման վայրում աշխատելու առաջարկ է ստացել: ՀԱԱՀ ուսանողների 90 %-ն աշխատանքային կիսամյակ-արտադրական փորձուսուցումը համարել է արդյունավետ ըստ որակի գնահատման եւ ապահովման կենտրոնի իրականացրած հարցումների:

## Սուսան Խաչատրյան.

### անմիջապես հասկացա, որ գտել եմ իմ բուհը

Սուսան Խաչատրյանը գտավ իր բուհը, երբ չարենցավանցի դպրոցականների խմբի կազմում այցելեց Ագրարային համալսարան: Ակտիվ ու լիարյուն ուսանողական տարիների ընթացքում յուրացրեց ամենակարեւորը՝ հարակայուն գյուղատնտեսության այբուբենն ու հիմնարար օրենքները:

Ավարտական կուրսի աշխատանքային կիսամյակը Սուսանի համար շատ հագեցած ու հետաքրքիր էր. կբաղվում էր եթերայուղատու բույսերի մշակությամբ, հավաքել-չորացնելով, օրգանական թեյեր ու չրեր էր պատրաստում: Ինչպես եւ ՀԱԱՀ ուսանողների ճնշող մեծամասնությունը, փորձուսուցման վայրից աշխատանքի առաջարկ ստացավ, սակայն կարծում է, որ դեռ ակադեմիական գիտելիքները խորացնելու անհրաժեշտություն կա. պատրաստվում է ուսումը շարունակել մագիստրատուրայում:

**Կարեն Մարգարյան.**

## հայր եւ որդի ագրոնոմները գումարում են փորձն ու նորարարությունը

Կարեն Մարգարյանը չորս տարի առաջ Ստեփանավանից Երեւան է եկել եւ գիտակցաբար ընդունվել Ագրարային համալսարան՝ ագրոնոմ հոր գործը շարունակելու նպատակով: Ուսման ընթացքում երկու կիսամյակ վճարովի փորձուսուցում է անցել հարավատ Լոռու մարզի «Դենդրո գարդն» ընկերությունում: Աշխատանքային կիսամյակի ընթացքում Կարենը ծանոթացել է ինտենսիվ այգու մշակման առանձնահատկություններին, մշակել հիմնականում հապալասի թփեր, ապա նաեւ մասնակցել տխլենու եւ նշենու այգեպաշտպան անտառաշերտի ստեղծման աշխատանքներին:

«Շատ օգտակար էր, մենք ոչ միայն ձեռք ենք բերում մասնագիտական կիրառական փորձառություն, այլ նաեւ վճարվում մեր կատարած աշխատանքի համար: Ստացվում է, որ բուհն ավարտելուց հետո դու այլեւ անփորձ ուսանող չես եւ արդեն ունես աշխատաշուկա մտնելու համար անհրաժեշտ մասնագիտական փորձ»,- ասում է Կարենը:

Փորձուսուցման ընթացքում Կարենը հասկացավ, որ ուզում է ուսումը շարունակել անտառտնտեսության ու կանաչապատման ուղղությամբ եւ որոշեց կրթությունը շարունակել ՀԱԱՀ մագիստրատուրայում:

## Դուալ մասնագիտական կրթական ուսուցում

■ ՀԱԱՀ գյուղատնտեսական քոլեջը եվակի քոլեջներից է, որ հաջողությամբ կիրառում է դուալ՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցումը գինեգործության բնագավառում՝ համագործակցելով երկրի առաջատար 7 գինեգործական ընկերությունների հետ: «Գինեգործու-

### Աստղիկ Խաչյանը

### որոշել է դառնալ Հայաստանի լավագույն կին խաղողագործը

■ Գորիսում հիմնական դպրոցն ավարտելուց հետո «առանձնապես սովորելու սեր չունեցող» Աստղիկ Խաչյանը որոշեց միջին մասնագիտական կրթություն ստանալ ու դրանով սահմանափակվել: ՀԱԱՀ Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի «Գինեգործություն, խաղողագործություն, էնոլոգիա» մասնագիտությունն ընտրած աղջիկը դուալ կրթական ծրագրի շրջանակում դասերի մեծ մասը՝ 70 տոկոսն անցկացնում էր ոլորտի անվանի ընկերություններում՝ ձեռք բերելով գործնական հմտություններ, օգտվելով սեզոնային աշխատանքներ կատարելով վարձատրվելու եվակի հնարավորությունից:

Քոլեջի երրորդ կուրսում Աստղիկը աշխատանքի երկու առաջարկ է ստացել «Արմենիա Վայն» ընկերությունից, ընտրել է լաբորատորիան, որտեղ աշխատում է որպես քիմիկոս-լաբորանտ: Այժմ քոլեջի չորրորդ կուրսում է, նպատակադրվել է դառնալ Հայաստանի լավագույն կին խաղողագործը: Որոշել է մասնագիտական կրթությունը շարունակել Ագրարայինի բակալավրիատում, այնուհետեւ՝ ՀԱԱՀ գործընկեր Գայվենհայմի համալսարանում:

թյուն, խաղողագործություն եւ էնոլոգիա» մասնագիտության երրորդ կուրսեցիների առաջին կիսամյակը մեկնարկեց գործատուների մոտ, որոնք ուսանողների խմբից արդեն ընտրել են ապագա աշխատակիցների:

2022-2023 ուստարում քոլեջը առաջին կուրսերում ներդրեց դուալ կրթական ծրագրով եւս 3 տեխնոլոգիական մասնագիտություն՝ «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Մսի եւ մսամթերքների տեխնոլոգիա», «Ջերմատնային տնտեսություն»:

## Կարիերայի զարգացում եւ շարունակական կրթություն

■ Համալսարանում հաջողությամբ շարունակվել են մասնագիտական կողմնորոշման, կարիերայի զարգացման եւ շարունակական կրթության ուղղություններով տարաբնույթ վերապատրաստումները եւ դասընթացները ինչպես ՀԱԱՀ ներկայացուցիչների, այնպես էլ արտաքին շահակիցների համար:

2022 թ. տարբեր թեմաներով վերապատրաստում է անցել ՀԱԱՀ 492 աշխատակից:



## Կարճաժամկետ դասընթացներ արտաքին շահակիցների համար

■ 2022 թ. ընթացքում 14 ուղղություններով իրականացվել են կարճաժամկետ դասընթացներ 1745 արտաքին շահակիցների համար, որը 5,7 անգամ ավելի է, քան 2021 թ.:

**2020–2022 թթ. ընթացքում մասնագիտական վերապատրաստում է անցել 2321 շահառու, որից 1745-ը՝ 2022 թ.**






### Հացարարման պատմություն՝ հաջողության պատմություն.

**Տաթեւիկ Գրիգորյան**

■ Ամեն ինչ սկսվեց շաքարային դիաբետ ունեցող հարազատիս համար առողջարար հացի որոնումներից. այս հացատեսակի պակասն ինձ դրդեց ինքնուրույն հաց պատրաստել ընտանիքիս համար: Այդպիսի հացի պահանջարկը գնալով ավելացավ. սկսեցի թխել բազմատեսակ հավելումներով հացեր առողջական խնդիրներ

ունեցող հաճախորդներիս համար: Իսկ հացարարման արվեստի նկատմամբ հատուկ հետաքրքրությունն ու խորը ուսումնասիրությունը հանգեցրեցին այս ուղղությամբ համապատասխան գիտելիք եւ հմտություն ձեռք բերելու որոշման:

Մասնակցեցի Ագրարային համալսարանում իրականացվող դասընթացին, որը եւ տվեց ինձ հուզող բոլոր հարցերի պատասխանները: Ակնկալիքներս արդարացան. դասընթացն ինձ օգնեց ստեղծել սեփական բիզնես, իրականացավ հացի արտադրություն ունենալու եւ Erkanq հացատուն հիմնելու իմ նպատակը: Դասընթացի ընթացքում ձեռք բերած հմտություններիս կիրառման շնորհիվ աճել է հաճախորդներիս թիվը: Ես շնորհակալ եմ իմ հարազատ համալսարանին սեփական գործ հիմնելու հարցում հաջողելու այսպիսի աննախադեպ հնարավորության համար:

## Մասնագիտական կողմնորոշում

■ Համալսարանում շարունակվում են մասնագիտական կողմնորոշման աշխատանքները Երեւանի եւ մարզերի բարձրդասարանցիների հետ. 2022 թ. 55 դպրոցների ավելի քան 1750 աշակերտ մասնագիտական կողմորոշման նպատակով այցելել է ՀԱԱՀ, բուհի ներկայացուցիչները մասնագիտական կողմնորոշման շրջայցեր են

իրականացրել 47 դպրոցներում: Համագործակցության հուշագիր է կնքվել 15 գործընկեր կազմակերպությունների, 30 ավագ դպրոցների ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ:



# ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

■ 2022 թ. ավարտվեց Ագրարային համալսարանում հաշվետվողականության միասնական համակարգի ներդրումը: ՈԳԱ կենտրոնը լրամշակել եւ ամբողջացրել է ՀԱԱՀ գործունեության բոլոր ուղղությունների կատարողականությունը գնահատող ԳԱՑ-երի (գնահատման առանցքային ցուցանիշ) եռաստիճան փաթեթը, հարդյունս որի չափելի են դառնում բուհի ձեռքբերումներն ու բացթողումները, հավաքվում է անհրաժեշտ տվյալների բազա, որը հնարավորություն է տալիս վերլուծել բուհի եւ դրա ստորաբաժանումների շարժընթացը ժամանակի մեջ: Հենվելով դրա վրա՝ բուհի ստորաբաժանումները 2022 թ. տարեկան պլանները կազմել են արդեն մշակված ԳԱՑ-երով, որը կարեւոր քայլ է ստորաբաժանումների ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջափուլով աշխատառճի յուրացման համար:

Հաշվետու տարում մշակվել է աշխատանքային կիսամյակի սկզբունքով փորձուսուցման ծրագրի նոր ձեւաչափը, ինչպես նաեւ Որակի ապահովման ձեռնարկի 2-րդ՝ «ՀԱԱՀ որակի ապահովման քաղաքականությունը ծրագրային մակարդակում» մասը: Լրամշակվել են որակի ապահովման համակարգի մեխանիզմներն ու գործիքները: ՄԿԾ պատասխանատուների ինստիտուտի ներդրման հետ մեկտեղ աստիճանաբար իրականացվում է որակի ապահովման ցանցային համակարգի ներդնումը:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

## ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ATC)

AGRIBUSINESS TEACHING CENTER

**Սեդա Զանապյան.**

ճիշտ որոշումը վճռորոշ է մասնագիտական վարգացման հնարավորությունների իրացման համար

■ Լինելով ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի շրջանավարտ՝ ուրախ եմ տարիներ առաջ կայացրած ճիշտ որոշմանս համար: ԱՈՒԿ-ի մասին լսել էի դեռեւս հիմնական դպրոցում սովորելու տարիներին: Ինձ հատկա-

պես շատ էր ոգեւորել կրթության անգլալեզու լինելու հանգամանքը, այսուհանդերձ, հաջողության առաջնային գրավականը փորձառու դասախոսական կազմի շնորհիվ մրցունակ ու որակյալ կրթություն ստանալն է:

ԱՈՒԿ-ի բակալավրիատում, այնուհետեւ Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրում (MAB) ուսումնառության տարիներին ստացած գործնական եւ տեսական գիտելիքների շնորհիվ արդեն ունեմ աշխատանքային բավականին հետաքրքիր փորձ, իսկ MAB-ն ավարտելուց անմիջապես հետո բիզնես վերլուծաբանության ոլորտում աշխատելու իրական հնարավորություն կա: Վստահ եմ, որ ստացածս գիտելիքները կնպաստեն իմ մասնագիտական աճին եւ նոր ձեռքբերումների հիմք կհանդիսանան:

## Ի-ՎԻ-ԷՆ ԳԻՆՈՒ ԱԿԱԴԵՄԻԱ




### Գինու ակադեմիայի շրջանավարտ **Գոհարի** եւ **ՎայնԳոգի** հաջողության պատմությունը

Ի-Վի-էն գինու ակադեմիայի շրջանավարտ Գոհար Ղարիբյանի մուտքը գինու արդյունաբերություն եղել է 2016-ին: 2018-ին էրավմուս +-ի շրջանակում գինեգործություն ուսումնասիրեց Իտալիայում: 2019-ին արդեն սկսեց արտադրել իր սեփական գինին, իսկ 2022-ին ՎայնԳոգ ապրանքանիշն արդեն շուկայում էր:

«Որպես Գինու ակադեմիայի շրջանավարտ՝ կարող եմ վկայել, որ այստեղ մենք համակողմանի գիտելիքներ ենք ստանում գինեգործության վերաբերյալ՝ խաղողի մշակումից մինչեւ վերջնական ապրանք: Ակադեմիան ուսանողներին տալիս է այնպիսի հմտություններ ու գործնական փարձառություն, որոնք ոլորտում հաջողելու հնարավորություն են ընձեռում: Ի-Վի-էնը, բարձրակարգ

կրթությունից բացի, մասնագիտական կարեւոր կապեր հաստատելու, կարիերայի համար խիստ անհրաժեշտ համագործակցության հնարավորություններ է տալիս մեզ: Գինու ակադեմիայի անկաշկանդ, բարեկամական միջավայրը ուսանողների մեջ զարգացնում է համերաշխության եւ փոխադարձ աջակցության մշակույթը, որը, դուրս գալով լսարանի սահմաններից, կառուցում է ուսանողների, դասախոսների եւ ոլորտի գործող մասնագետների համայնքի զգացողությունը: Ակադեմիայի մաս կազմելով՝ դու մաս ես կազմում հայաստանյան գինեգործների հարաճուն համայնքի՝ շրջապատված գինին սիրող ու հարգող եւ գինեգործությանը նվիրված համախոհներով: Գինու ակադեմիայում մենք հասկանում ենք, թե ինչպես է գինին միավորում մարդկանց», - ասում է Գոհարը:

## «ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Գերմաներենի բարդ քերականական կառույցներն ավելի խորացրին ծրագրի նկատմամբ հետաքրքրությունս.



**Մարիամ Սարգսյան**

■ «Ագրոէկոնոմիկա եւ սննդարդյունաբերության էկոնոմիկա» մասնագիտության երրորդ կուրսում սովորելիս, ՀԱԱՀ-ի եւ Գերմանիայի Վայհենշտեֆան Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի համատեղ «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագիր ընդունվելու համար մասնակցեցի ՀԱԱՀ-ում կազմակերպվող գերմաներենի դասընթացներին եւ զգացի, որ լեզվի բարդ քերականական

կառույցները միայն էլ ավելի են խորացնում հետաքրքրությունս ծրագրի նկատմամբ:

Վայհենշտեֆանում գյուղատնտեսական գործնական կիսամյակն անցկացրեցի՝ ապրելով գերմանական տնային տնտեսությունում: Շատ օգտակար գործնական կիսամյակի ընթացքում ձեռք բերած գիտելիքների հիմքի վրա շարունակում եմ ուսումնառությունս ՎԹԿԳ համալսարանում՝ խորացված գիտելիքներ ստանալով կառավարման ոլորտի մաս կազմող բոլոր բնագավառներում: 2022 թ. ինձ համալսարանում երկու կիսամյակ աշխատելու հնարավորություն ընձեռվեց, որը շատ մեծ փորձառություն էր ինձ համար:

Այժմ ես լավատեսորեն եմ նայում հետագա կարիերայիս հեռանկարներին՝ ստացած գիտելիքներիս ու փորձառությանս շնորհիվ՝ լինելով մասնագիտական ասպարեզում ավելի ինքնավստահ եւ փորձառու:

## ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ՖՐՈՒՏԵՆԻԱ)

■ **Ծրագրի ագրոտեխնիկական բաղադրիչի** շրջանակում 2022 թ. կատարվել են ինտենսիվ պտղատու այգու խնամքի եւ մշակության ընթացիկ աշխատանքներ, տեղադրվել են եղանակային կայան, հողի խոնավաչափեր եւ ջերմաչափեր, էլեկտրական ցանկապատ եւ այլն: ՀԱԱՀ ուսանողներն ու «Ինտենսիվ այգիների հիմնում եւ կառավարում» դասընթացի մասնակիցները պարբերաբար այցելել են ինտենսիվ այգի:

Aygi.am կայքի բովանդակությունը համալրվել է ուսումնական նոր նյութերով, իսկ ՀԱԱՀ կայքում ստեղծվել է ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագիծը ներկայացնող առանձին էջ՝ **https://anau.am/fruitenia/**:

**Frutenia նախագիծ**

**aygi.am կայք**

ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի **կրթական բաղադրիչի** շրջանակում հաշվետու ժամանակաշրջանում մշակված «Ինտենսիվ այգիների հիմնում եւ կառավարում» եւ «Պտղաբուծություն» ձեռնարկները

հաստատվել են ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից եւ տեղադրվել ՀԱԱՀ գրադարանի էլեկտրոնային կայքում, ինչպես նաեւ aygi.am կայքում: Մշակվել են «Կայուն արտադրության համակարգեր ընկուկավոր պտղատեսակների այգիների, ինտենսիվ պտղատու այգիների եւ տնկարանների օրինակով» ձեռնարկը, «Ժամանակակից պտղաբուծության ուղեցույց» ֆերմերների համար եւ «Կայուն գործելակերպերի ուղեցույց»՝ պտղաբուծությամբ զբաղվող ֆերմերների համար:

2022 թ. փետրվար-ապրիլ ամիսներին մշակվել եւ իրականացվել է «Ինտենսիվ պտղատու այգիների հիմնում եւ կառավարում» վերապատրաստման փորձնական եռամսյա դասընթացը: Դասընթացն ունեցել է 80 մասնակից, որոնցից 50-ն ավարտել եւ ստացել է հավաստագիր: Յուրաքանչյուր տեսական դաս ուղեկցվել է ինտենսիվ այգի/տնկարան գործնական այցով: Գործնական պարապմունքների ժամանակ խորհրդատվություն է տրամադրել նաեւ

միջակգային փորձագետը: Հաշվի առնելով դասընթացի նկատմամբ բարձր պահանջարկն ու մասնակիցների կարծիքները՝ դասընթացն իրականացվել է եւս մեկ անգամ՝ 2 ամիս տեւողությամբ եւ 31 մասնակցով:

Նախագծի շրջանակում գյուղատնտեսական 8 քոլեջների հետ կնքված համագործակցության հուշագրերի համաձայն՝ քոլեջների դասախոսների համար ՀԱԱՀ-ի «Զարթոնք» հանգստյան տանը իրականացվել է վերապատրաստողների վերապատրաստում՝ նպատակ ունենալով վարգացնել գյուղատնտեսական քոլեջների դասախոսների կարողությունները ժամանակակից, ինտենսիվ, հարակայուն պտղաբուծության ոլորտում:

# ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՄԲԱՐ (ԱԳՐԻ ՔԵՄՓ)

AGRI CAMP

■ «Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման եւ ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ)» նախագիծն իրականացվում է ICARE հիմնադրամի հետ համատեղ՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

2022 թ. նախագծի շրջանակում «Զարթոնք» հանգստյան տան տարածքում 1300 քմ վրա հիմնվել է հատապտղանոց եւ պտղատու այգի: Այգին համալրվել է կաթիլային ոռոգման համակարգով, լարասյունային համակարգով եւ կարկտապաշտպան ցանցով: Կառուցվել է հավաբուն:

Իրականացվել են արդիական թեմաներով դասընթացներ, որոնք ունեցել են 145 մասնակից՝ ՀԱԱՀ դասախոսներ, աշխատակիցներ, ուսանողներ, շրջանավարտներ եւ ոլորտով հետաքրքրված երիտասարդներ:

## ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ARMENIAN WORKFORCE DEVELOPMENT ACTIVITY)

■ ԱՄՆ ՄԶԳ այս ծրագրի շրջանակում մշակվել եւ 2022-2023 ուստարում ներդրվել են «Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում եւ շահագործում», «Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Ջերմատնային տնտեսություն», «Պահածոների եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա», «Մսի եւ մսամթերքի տեխնոլոգիա» 5 դուալ կրթական ծրագիր Ա. Քոչինյանի անվ. գյուղատնտեսական քոլեջում եւ ՀԱԱՀ բոլոր մասնաճյուղերում:

Ծրագրի շրջանակում մշակվել եւ իրականացվել են նաեւ տարբեր կարճաժամկետ նախագծեր, ինչպիսիք են՝ «Փափուկ հմտություններ», «Շոկոլադի եւ հրուշակեղենի արտադրության տեխնոլոգիա», «Արեւային սարքավորումների ներկայացումն ու խորհրդատվությունը գյուղատնտեսության մեջ/ագրոպարենային համակարգում», «Արեւային ջրատաքացուցիչների չափագրում, տեղադրում եւ սպասարկում գյուղատնտեսության մեջ/ագրոպարենային համակարգում», «Ագրոպարենային համակարգի քիմիկլաբորանտ», «Ավանդական պանիրների պատրաստման գաղտնիքները», «Քրաֆտ գարեջրագործության եւ թորման տեխնոլոգիա», «ԱԹՍ-ների կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում» դասընթացները: 2022 թ. ընթացքում վերոնշյալ կարճաժամկետ դասընթացներն ավարտել են 15-29 տարեկան 435 երիտասարդներ, կանայք եւ հաշմանդամություն ունեցող անձինք:

Հայաստանում աշխատուժի վարգացման ծրագրի շրջանակում նախատեսված է վերապատրաստել 10 հազ. մասնագետի, ստեղծել շուրջ 7000 աշխատատեղ, այդ թվում՝ ավելի քան 3200-ը՝ ագրարային ոլորտում: Այս հավակնոտ ցուցանիշները մեծապես հիմնված են ՀԱԱՀ-ի վերջին տարիների ագրոտեխնոլոգիական առաջընթացի վրա:

Ներառականության ուղղությամբ վերապատրաստվել է ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմից 191 մարդ, որից 30-ը՝ Սիսիանի եւ Վանաձորի մասնաճյուղերից:

Հուշագրեր են կնքվել 14 քոլեջների հետ (այդ թվում՝ գյուղատնտեսական 6 եւ գյուղատնտեսական ծրագրեր իրականացնող 5 քոլեջ), որոնց կարիերայի կենտրոնների աշխատակիցները ՀԱԱՀ քոլեջների աշխատակիցների հետ միասին անցել են կարողությունների վարգացման առցանց եւ դեմառդեմ վերապատրաստումներ, իրականացրել են մասնագիտական ուղղորդմանն ուղղված բազմաբնույթ միջոցառումներ:



Ծրագրի շրջանակում **Սիսիանի մասնաճյուղում** ստեղծվել է Գիտելիքի նորարարական հանգույց, իսկ **Վանաձորի մասնաճյուղում**՝ տեխնոլոգիական լաբորատորիաներ (մսամթերքի, կաթնամթերքի, պահածոյացման եւ սննդախտանյութերի ուղղությամբ), որոնք իրենց դռները կբացեն առաջիկայում: Այս պահին նորոգման փուլում են Պարենամթերքի մշակման ցուցադրական լաբորատորիան, Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի Գիտելիքի նորարարական հանգույցը, Ուսանողների հաջողության կենտրոնը: Վերջինիս ստեղծմանը միացել է նաեւ Ամերիա բանկը, որը նախատեսում է ուսանողների համար իրականացնել հատուկ դասընթացներ:

## «ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» (SOAA)

SOAA
Supporting Organic Agriculture in Armenia

■ Ծրագրի կրթական եւ փորձացուցադրական բաղադրիչների շրջանակում կազմակերպվել են տարաբնույթ հանդիպում-քննարկումներ ոլորտի մարտահրավերների եւ հնարավորությունների, ինչպես նաեւ «Օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի» բարելավման ուղղությամբ: 2022 թ. ունեցանք ծրագրի առաջին շրջանավարտներին: Մագիստրոսական ծրագիրը հաղթահարած հինգ շրջանավարտները տարածաշրջանում առաջին դիպլոմավորված մասնագետներն են, որոնք օրգանական գյուղատնտեսության գիտական հենքի սկիզբ կդնեն:

Էրասմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակում, որը նպատակ ունի աջակցելու SOAA ծրագրին, 2022 թ. նոյեմբերին տեղի է ունեցել փորձի փոխանակման այց Վիեննայի BOKU համալսարան եւ ծրագրի գործընկեր կառույցներ:

Ակունք համայնքում ստեղծվելու է առաջին օրգանական ուսում-նափորձնական տնտեսությունը: Ընթացքի մեջ են նախագծման եւ նախապատրաստական աշխատանքները:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՓՈՔՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ՝ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՀԱԳԵՑԱԾ ԽԵԼԱՑԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ՀԱԱՀ-Ի ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

■ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի ֆինանսական աջակցությամբ իրականացվող այս ծրագրի (կավարտվի 2023 թ. ապրիլին) շրջանակում Սիսիանի մասնաճյուղում ստեղծվում է հողի անալիզի ժամանակակից լաբորատորիա, կառուցվում է 303 մ$^2$ ջերմատուն եւ հիմնվում է 5000 մ$^2$ ինտենսիվ այգի: Նախատեսվում է վերապատրաստել մասնաճյուղի մասնագետներին, մասնաճյուղը վերածել հարթակի, որտեղ գյուղատնտեսության ոլորտում ներգրավվածները, մասնավոր հատվածի ներկայացուցիչները եւ ուսանողները համատեղ կմշակեն գյուղատնտեսության վարման մարտահրավերները հաղթահարելու լուծումներ եւ կայուն գյուղատնտեսության գործելակերպեր: ՀԱԱՀ մասնագետ-փորձագետները խորհրդատվական այցերի եւ դասընթացների միջոցով շարունակում են աջակցել ՀՀ տարբեր մարզերում ՄԱԿ ՊՀԾ-ի շահառուներին, որոնք ներգրավված են «Դպրոցական սնունդ» ծրագրում:



# ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

*Տեսահոլովակ «Ագրարայինի նոր ենթակառույցները 2019-2022» Սկանավորիր եւ դիտիր*

■ 2022 թ. շարունակվել են ՀԱԱՀ ուսումնական, հետազոտական ու արտադրական ուղղվածության նորարարական ուսումնաօժանդակ ենթակառույցների ստեղծման ու վերակառուցման աշխատանքները:

■ ՀԱԱՀ-ի եւ Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) համագործակցությամբ, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ ՀԱԱՀ 1-ին մասնա-

շենքում ավարտին են մոտենում անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով եւ գույքով ապահովված կենսագիտության ինկուբատոր - բաց լաբորատորիայի ստեղծման աշխատանքները:



■ ՀԱԱՀՀ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի եւ մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղում ՄԱԶԾ օժանդակությամբ ավարտվել են Հայաստանի հողերի՝ տարածաշրջանում միակ թանգարանի համար հատկացված տարածքի վերանորոգման աշխատանքները:

■ Սիսիանի մասնաճյուղում ակտիվ իրականացման փուլում է Խելացի գյուղատնտեսության կենտրոնի, մասնավորապես՝ խելացի անասնաշենքի եւ մեքենատրակտորային կայանի կառուցումը ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանության եւ Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հետ գործակցությամբ: Ավարտին են հասցվել մասնաճյուղի Գիտելիքի նորարարական հանգույցի լսարանի վերանորոգման եւ կահավորման, ինչպես նաեւ հողի անալիզի լաբորատորիայի վերանորոգման աշխատանքները:

■ Մայիսին ՀԱԱՀ 2-րդ մասնաշենքում բացվեց Ճշգրիտ գյուղատնտեսության կենտրոնը՝ ԱԹՍ-ների ուսումնական լաբորատորիայով: Լաբորատորիան ստեղծվել եւ կահավորվել է «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն» (EU-GAIA) նախագծի շրջանակում: Լաբորատորիայի կահավարմանն աջակցել է նաեւ Ֆարմ կրեդիտ Արմենիա վարկային կոոպերատիվը: Ագրոդրոնների լաբորատորիան հագեցած է տարբեր գործառույթներ իրականացնող գյուղատնտեսական 4 ԱԹՍ-ներով, ԵՏ համակարգերով եւ հեռահար վոնդավորման սարքերով, համակարգիչներով եւ համապատասխան ծրագրակազմերով եւ ծառայելու է համալսարանի ուսանողներին ու դասախոսներին՝ ուսումնահետազոտական նպա-

տակներով, ֆերմերներին եւ գործող մասնագետներին՝ արտադրական ու վերապատրաստման նպատակներով, ինչպես նաեւ ոլորտի տարբեր շահակիցների՝ խորհրդատվական ծառայությունների տեսքով:

■ Անասնաբույժի օրվա կապակցությամբ Անասնաբուժական բժշկագիտության եւ անասնաբուծության ֆակուլտետի Արեշի մասնաշենքում տեղի ունեցավ Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնի պաշտոնական բացումը: Անասնաբուժական նորագույն կաղապարվածքներով ու սարքերով հագեցած նորարարական ուսումնական այս կենտրոնն ունի երեք հիմնական բաժին՝ անասնաբուժական ժամանակակից կեղծակերպման բաժին, անասնաբուժական ժամանակակից կլինիկա եւ ուսումնական լսարաններ: Կենտրոնը միանգամայն նոր խոսք է անասնաբուժական կրթության, գիտության, հետազոտությունների եւ ծառայությունների բնագավառներում: Այն ստեղծվել է ՀԲ ֆինանսական աջակցությամբ, Նորարարությունների մրցակցային հիմնադրամի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակում կնքված դրամաշնորհային պայմանագրի հիման վրա:

■ Վանաձորի մասնաճյուղում ավարտին է հասցվել պահածոների, կաթի, մսի 3 լաբորատորիաների շինարարությունը եւ գույքի ձեռք բերումը՝ Հայաստանում աշխատուժի կարգացման ծրագրի շրջանակում:

ԵՄ-ից ֆինանսավորվող եւ Ավստրիական կարգացման գործակալության կողմից իրականացվող Կանաչ գյուղատնտեսություն նախաձեռնություն Հայաստանում (EU GAIA) նախագծի շրջանակում ՀԱԱՀ Շիրակի եւ Վանաձորի մասնաճյուղերում շահագործման են հանձնվել հողի անալիզի արդիական լաբորատորիաներ:

■ Սոցիալական գործընկերության եւ կորպորատիվ պատասխանատվության, մասնավոր հատվածի հետ գործակցության լավագույն օրինակ է փետրվարին ՀԱԱՀ-ում բացված Գարեջրագործության եւ թորման ուսումնափորձարարական լաբորատորիան: «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն եւ «Երեւանի գարեջուր» ՓԲԸ-ն ՀԱԱՀ այն գաղափարակից կազմակերպություններն են, որոնց ֆինանսական աջակցությամբ կատարվել է լաբորատորիայի եւ կից տարածքի վե-

ռանորոգում եւ կահավորում, ձեռք են բերվել գարեջրի թորման հոսքագիծ, այլ անհրաժեշտ սարքավորումներ եւ գործիքներ:

Նոր ենթակառույցներ ՀԱԱՀ 1-ին մասնաշենքում՝

- 2022 թ. «Հայաստանում աշխատուժի կարգացման ծրագրի» ֆինանսավորմամբ սկսվել են սննդի (կաթ, միս, ձուկ եւ պահածո) լաբորատորիաների շինարարական աշխատանքները, հիմնովին վերանորոգվել է ՀԱԱՀ-ում ծրագրի գրասենյակային տարածքը:
- Բարերարների ֆինանսական աջակցությամբ 2022 թ. դեկտեմբերին սկսվել են Օրգանական գյուղատնտեսության լաբորատորիայի եւ լսարանի հիմնանորոգման աշխատանքները:
- Ամերիաբանկ ՓԲԸ ֆինանսական աջակցությամբ մեկնարկել են ուսանողների հաջողության կենտրոնի եւ դրա հարակից միջանցքի նորոգման աշխատանքները:

2022 թ. ընթացքում ՀԱԱՀ-ում կատարված շինվերանորոգման, բարեկարգման եւ նյութատեխնիկական բազայի համալրման տարաբնույթ ու լայնածավալ աշխատանքների գերակշիռ մասը կատարվել է աջակիցների եւ գործընկերների տրամադրած միջոցներով:

# ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

■ «Բալահովիտ» ուսումնափորձնական տնտեսությունում «Ռակմավարական վարգացման գործակալություն» ՀԿ-ի «Հմտությունների եւ գիտելիքի վարգացում» ծրագրի շրջանակում շահագործման հանձնված Կաթնամթերքի վարպետաց դպրոցում փորձուսուցման միջոցով ՀԱԱՀ-ի եւ գործընկեր համալսարանների ուսանողներին փոխանցվել են արդիական գործնական մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ:

2022 թ. Հայաստանում աշխատուժի վարգացման ծրագրի շրջանակում Կաթնամթերքի վարպետաց դպրոցում իրականացվել

«Ավանդական պանիրների պատրաստման գաղտնիքները» դասընթաց
Կաթնամթերքի վարպետաց դպրոցում

են թթու կաթնամթերքի, դասական կաթնամթերքի եւ պանիրների արտադրության կարճաժամկետ վերապատրաստումներ, որոնց մասնակցել է 119 շահառու:

Վարպետաց դպրոցում 2022 թ. վերակառուցվել է արդյունավետ կերի, կենսաբանական պարարտանյութերի արտադրման եւ հումքի վերամշակման գիտափորձարարական արտադրամաս, որտեղ մեր գիտնականների մասնակցությամբ արտադրվում եւ փորձարկվում են նոր կերային հավելումներ:

Բալահովիտի ՈՒՓՏ-ում ավարտվել են «խելացի» անասնաշենքի կառուցման աշխատանքները: Տնտեսությունն առաջիկայում կհամալրվի տավարի բարձրմթերատու եվրոպական ցեղերի կենդանիներով, որի շնորհիվ կամբողջանա ժամանակակից արտադրության շրջափուլը:

## ՈՍԿԵՀԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

■ ՀՀ-ում Արգենտինայի դեսպանության աջակցությամբ եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության ֆինանսավորմամբ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի եւ Արգենտինայի Գյուղատնտեսական տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի (INTA) կողմից իրականացվող «Հաստատութենական հզորացում - ցուցադրական դաշտ Արմավիրի մարզում» համատեղ ծրագրի շրջանակում, օգտագործելով INTA-ի փորձը, ՀԱԱՀ Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսության՝ կարկտապաշտպան ցանցով ստվերարկված եւ կաթիլային ոռոգման համակարգ ունեցող 1,5 հա տարածքում 2022 թ. վեգետացիոն ժամանակահատվածում փորձարկվել են բանջարային մշակաբույսերի (վարունգ, սմբուկ եւ տաքդեղ) աճեցման նորագույն տեխնոլոգիաներ:

10 հա տարածքի վրա իրականացվել է միջավաղահաս եգիպտացորենի ցանք՝ սիլոսային կանաչ վանգված ստանալու համար: Կիրառվել է ակոտային միացություններով արտարմատային սնուցման նոր տեխնոլոգիական մոտեցում. սնուցող լուծույթը ԱԹՍ-ի միջոցով (սրսկումով) տրվել է բույսերին, որի կիրառման արդյունավետությունը տնտեսապես հիմնավորվել է:

Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնը հանդես է գալիս որպես ուսումնափորձարարական հարթակ, որտեղ ՀԱԱՀ շրջանավարտները փորձում են ստեղծել գինիների նոր տեսակներ եւ հանդես գալ շուկայում:

## «ԱԿՈՒՆՔ» ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

■ 2022 թ. կենտրոնը ստացավ անցումային օրգանական տնտեսության 2-րդ տարվա հավաստագիրը: «ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU GAIA) նախագծի շրջանակում կենտրոնում հիմնվել է ինտենսիվ այգի, կառուցվել է ջերմատուն: «Օրգանական գյուղատնտեսության իկորացում Հայաստանում. մասնակցային բարձրագույն կրթություն եւ գիտելիքի փոխանակում հանուն վարգացման» (SOAA) ծրագրի շրջանակում նախատեսվում է տնտեսությունը վերափոխել ուսանողական-ցուցադրական ֆերմայի, որտեղ իրենց հետազոտական աշխատանքները կանցկացնեն ՀԱԱՀ ուսումնառողները, ոլորտի հետազոտողները եւ հետաքրքրված այլ շահակիցներ:

## ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ ՋՈՒԴԻ ՍԱՐՅԱՆ ԵՎ ՎԻԿՏՈՐ ՋԱՌՈՒԳՅԱՆ

■ *Այս անունները լայնորեն հայտնի են Սփյուռքում եւ Հայրենիքում: Նրանց անվանն են առնչվում Հայաստանում իրականացված բազմաթիվ կարգացման եւ սոցիալական ծրագրեր: Բոստոնահայ բարերար ամուսինները հայտնի են նաեւ որպես Ագրարային համալսարանի եւ ռեկտոր Վարդան Ուռուտյանի հին ու հուսալի բարեկամներ:*

*Տիկին Սարյանի եւ պարոն Ջառուգյանի հովանավորությամբ Ագրարային համալսարանում իրականացված առաջին ծրագիրը արեւային պանելների տեղադրումն էր Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի տանիքին: Դրանից հետո անցած երկու տասնամյակների ընթացքում մեր բարեկամները ֆինանսական աջակցություն են ցուցաբերել Գինու ակադեմիայի համտեսի սրահի ստեղծման, նորարարական ջերմատան տեխնոլոգիական հագեցման գործում,*

*մասնակցել Բալահովիտի ՈՒՓՏ-ում Կաթնամթերքի վարպետաց դպրոցի վերակառուցմանն ու կահավորմանը, ամբողջովին հոգացել են Բալահովիտում խելացի անասնաշենքի կառուցման եւ տոհմային երինջների ձեռք բերման ծախսերը եւ այլն:*

*Ջուդին եւ Վիկտորը, անշարժ գույքի եւ ֆինանսական բնագավառներում իրենց կարիերան ավարտելուց հետո, անձնվիրաբար եւ հետեւողականորեն զբաղվում են Հայաստանում բարեգործական ծրագրերի իրականացմամբ: Նրանց հետաքրքրությունների շրջանակում առանձնակի տեղ են զբաղեցնում գյուղատնտեսությունը եւ կրթությունը՝ ոլորտներ, որ առանցքային նշանակություն ունեն Հայաստանի հուսալի ապագայի կերտման գործում: Այս առումով հայրենանվեր այս զույգը, ի դեմս Ագրարային համալսարանի, վաղուց գտել է համագործակցության եւ ազգային-պետական կարեւորություն ունեցող ծրագրերի իրականացման համար առավել վստահելի գործընկերոջը: Շնորհակալ ենք մեր բարեկամներին՝ Ագրարայինի կողքին լինելու եւ մեր ծրագրերի իրականացմանն աջակցելու համար:*

# ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

■ Համալսարանի գիտահետազոտական գործունեության ոլորտում 2022 թ. շարունակվել են նախորդ տարի մեկնարկած կառուցվածքային բարեփոխումները, ամբողջ ծավալով իրականացվել են գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման 8 ծրագրերը:

ՀՀ պետական բյուջեից գիտական, գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման գումարը 2022 թ. ավելացել է 53 %-ով՝ կազմելով 336,2 մլն դրամ՝

| | | |
|---|---|---|
| **3 գիտական կենտրոն մասնաճյուղեր** | **229,9** մլն դրամ | **68 %** |
| **3 հետազոտական կենտրոններ** | **41,6** մլն դրամ | **13 %** |
| **2 գիտահետազոտական ինստիտուտներ** | **64,7** մլն դրամ | **19 %** |

2022 թ. շարունակվել է 4 միջազգային գիտական թեմա, 2 գիտական թեմա՝ միջազգային համաֆինանսավորմամբ: Համալսարանը շարունակել է նախորդ տարում շահած դրամաշնորհային 16 ծրագրերը (ընդհանուր բյուջեն՝ **422 մլն դրամ**): Նշված ծրագրերից 15-ը շարունակվելու են նաեւ 2023-ին, որից 8-ը՝ նաեւ 2024-ին: Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության շնորհած «Գաղափարից դեպի բիզնես» թեման հաջողությամբ ավարտվել է:

2022 թ. արդյունավետորեն իրականացվել են մի շարք միջազգային գիտական ծրագրեր, որոնց շրջանակում համալսարանը համագործակցում է ԵԱՏՄ, ԱՊՀ, Ճապոնիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի գիտական կենտրոնների հետ:

■ **«Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիաներ՝ ձկների եւ ընտանի թռչունների ջերմային սթրեսի կարգավորումը»** առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեման շարունակվելու է նաեւ հետագա 4 տարիներին: Հետազոտությունների միջոցով նախատեսվում է առաջարկների համակարգի մշակում՝ ուղղված գյուղատնտեսական կենդանիների ջերմադիմադրողականության բարձրացմանը:

■ ՀՀ գիտության կոմիտեի՝ Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում «ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրման աջակցության ծրագրի» միջազգային մրցույթում հաղթող է ճանաչվել մեր համալսարանի ներկայացուցչի **«Կլիմայի փոփոխության ազդեցությունը Հայաստանում. բույսերի կենսաբազմազանության ուսումնասիրության ամբողջական մոտեցում»** թեման:

■ 2022 թ. հրապարակված գիտական աշխատանքների թիվը կազմել է 281 (46,3 % աճ), որից 118-ը (28,3 $ աճ)՝ արտերկրի գիտական պարբերականներում, այդ թվում՝ 39-ը բարձր ազդեցության գործոն ունեցող պարբերականներում՝ 2021 թ. 25 հրապարակման դիմաց:

**Գիտական հրապարակումներ 2020–2022 թթ.**




**Գիտական հոդվածների եւ գիտաժողովների վեկույցներ**

**Գիտական հոդվածների եւ գիտաժողովների վեկույցներ միջազգային գիտական պարբերականներում**

■ Շարունակվել է նաեւ ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խթանման գործընթացը. բարձրացվել է լրավճարների չափը, իսկ բարձր վարկանիշ ունեցող միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում հրապարակված հոդվածների եւ մենագրությունների համար սահմանվել է անհամեմատ մեծ լրավճար: 2022 թ. ընդունվել է 109 գիտական աշխատանք, 96 հեղինակներին վճարվել է 4,8 մլն դրամ լրավճար:

**Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խրախուսման գործընթացի վիճակը**




■ Գիտական աշխատանքների թիվը
■ Լրավճարի գումար, հազար դրամ
■ Հեղինակների թիվը

Նախորդ տարվա լրավճարի գումարը հաշվետու տարվա գումարից 13,1 տոկոսով ավելի լինելը գլխավորապես պայմանավորված է 2021 թ. 16 դրամաշնորհային ծրագիր շահելու համար տրամադրված լրավճարներով, որոնք շարունակվելու են 2023-2024 թթ.:

Եթե դիտարկում ենք միայն գիտական հրապարակումները, ապա ինչպես հրապարակումների թվի, այնպես էլ տրամադրված լրավճարի առումով պատկերը միանգամայն այլ է, որն ակնհայտ է ներկայացված գծապատկերից:

**Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական հրապարակումների խրախուսման գործընթաց**




- Գիտական աշխատանքների թիվը
- Լրավճարի գումարը, հազար դրամ
- Հեղինակների թիվը

2022 թ. համալսարանը գիտության բնագավառում անցում է կատարել գիտական աշխատողների վարձատրության նոր բարձրացված դրույքաչափերի, որի համար ելակետ է հանդիսացել 2021 թ. գիտաշխատողների որակավորման գործընթացը:

## ՀԱԱՀ ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

■ ՀԱԱՀ Դաշտավարության եւ անասնապահության մեքենայացման բաժինը ՀՀ ԲՏԱ նախարարության ֆինանսավորմամբ իրականացվող «Գաղափարից դեպի բիզնես» հեռանկարային բաղադրիչով դրամաշնորհային ծրագրի (բյուջեն 10 մլն ՀՀ դրամ) շրջանակում պատրաստել է հողամշակման համար ֆրեզ մեքենայի արտադրական փորձանմուշ: Մեքենան նախատեսված է ինտենսիվ պտղատու եւ խաղողի այգիների միջբնային եւ միջվավային տարածությունների հողի մշակման աշխատանքների մեքենայացման, մոլախոտվածության դեմ մեխանիկական պայքարի համար: Մինչ այդ գիտական խումբը ստեղծել էր ավանդական տեխնոլոգիայով մշակվող այգիների հողամշակման մեքենա: Ստեղծել են նաեւ մերձբնային եւ միջբնային տարածությունների խոտհնձիչ մեքենաներ:



Այգեփոր ֆրեզ մեքենայի ընդհանուր տեսքը

Մեքենաներն առանձնանանում են դյուրօգտագործելիությամբ, արդյունավետությամբ, քարքարոտ հողային պայմաններին հարմարվածությամբ, մատչելիությամբ եւ անվտանգությամբ:

Ավանդական այգիների հողամշակման ֆրեզ մեքենան ներկայում շահագործվում է Արմավիրի մարզում: Բավականին մեծ հետաքրքրություն կա նաեւ ինտենսիվ այգիներ մշակող տնտեսավարողների շրջանում:

«Գաղափարից դեպի բիզնես» ծրագրից շահած դրամաշնորհով այժմ իզորացվում են նախագծված մեքենաները: Գիտական թիմը փորձում է ինքնակազմակերպվել համալսարանական տարածքում եւ աստիճանաբար հասնել մշակված մեքենաները համալսարանում հավաքելու մակարդակին՝ որպես առեւտրայնացման գործընթացի կարեւոր սկիզբ:

Մեքենաները նախորդներից տարբերվում են նաեւ շարժաբերման սկզբունքով, վերջինները հիդրոմեխանիկական շարժաբերմամբ են, որը բարձրացնում է դրանց ճկունությունը, շահագործման անվտանգությունը: ՀԱԱՀ գիտնականների ստեղծած մեքենաներն ունեն գոհացնող որակ եւ բարձր արտադրողականություն, դրանով իսկ՝ հայրենական եւ արտերկրի շուկայում հաջողելու ներուժ: Հողամշակման ֆրեզը արտադրական ինտենսիվ փորձարկումների փուլում է, իսկ խոտհնձիչ մեքենան կփորձարկվի եկող տարվա սկզբին:

Հավելյալ ուշադրության, պետական հոգածության եւ կազմակերպվածության պարագայում արդեն ստեղծված եւ դեռ գաղափարի մակարդակում գտնվող մեքենաները կարող են հայաստանյան գյուղմեքենաշինության լավ ավանդույթների վերածննդի հիմք դառնալ:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

■ 2022 թ. կնքվել կամ վերահաստատվել է միջազգային համագործակցության 6 հուշագիր եւ պայմանագիր Վալգա մարզի մասնագիտական ուսուցման կենտրոնի, Ռուսաստանի պետական ագրարային համալսարան - Կ. Տիմիրյազեւի անվան պետական գյուղատնտեսական ակադեմիայի, Ազգային հետազոտական համալսարանի (ՌԴ), Գորոդովիկովի անվան Կալմիկիայի պետական համալսարանի, Տրուբիլինի անվան Կուբանի պետական համալսարանի, Վրաստանի գյուղատնտեսական համալսարանի հետ:

## ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1

2022 թ. էրազմուս+-ի շրջանակում ՀԱԱՀ-ն ունի կնքված 39 պայմանագիր, համագործակցում է 38 համալսարանի հետ: Ընդ որում, այս տարի նոր համագործակցություն է սկսվել Դել Մարկի պոլիտեխնիկական, Կրակովի գյուղատնտեսական, Պորտոյի, Բուրգունդիա-Ֆրանս-Կոնտե համալսարանների հետ:

**էրազմուս+ ՀԳ1 արտագնա շարժունության տվյալներ**



2022 թ. ՀԱԱՀ-ն իրականացրել է աննախադեպ արտագնա շարժունություն. 79 աշխատակից եւ 5 ուսանող եվրոպական 28 համալսարաններում մասնակցել է վերապատրաստումների, դասընթացների, միջազգային համաժողովների ու հանդիպումների, կարդացել դասախոսություններ:

## ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳՀ

Ընթացքի մեջ են՝

- «Հայաստանում եւ Ղրղզստանում աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում միջառարկայական հետբուհական ծրագրերի մշակում եւ հետապոտական ցանցերի ամրապնդում» ծրագիրը,
- «Աջակցություն անգլերենով դասավանդման նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին եւ գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը եւ միջազգայնացումը բարելավելու նպատակով» ծրագիրը,
- «Visegrad+. Փափուկ հմտությունների զարգացումը որպես կբաղվածության հիմնական գործիք. v4 փորձի փոխանցում» ծրագիրը:

2022 թ. ՀԱԱՀ-ն, առաջին անգամ որպես գլխավոր համակարգող, կիրականացնի **«Կանաչ գործարքին միտված ակվակուլտուրայի եւ ձկնային տնտեսության կրթության զարգացում Հայաստանում եւ Ուկրաինայում. կրթությունից դեպի էկոլոգիա»** (AFISHE) ծրագիրը, որի հիմնական նպատակն է նվազեցնել ակվակուլտուրայի եւ ձկնային տնտեսությունների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ակվակուլտուրայի եւ ձկնային տնտեսությունների մագիստրոսական ծրագրերի ստեղծմամբ եւ զարգացմամբ Հայաստանում եւ Ուկրաինայում:

■ Միջազգային շարժունության եւ համագործակցության լավագույն օրինակներից առանձնացնենք՝

**ՀԱԱՀ «Ճշգրիտ գյուղատնտեսություն» մասնագիտական կրթական ծրագիրը**, որի իրականացման գործընթացում ներգրավված են եղել հունական «Արատոս գրուպ» կազմակերպության ներկայացուցիչները եւ Արեւմտյան Մակեդոնիայի համալսարանի դասախոսական անձնակազմը: «Ճշգրիտ գյուղատնտեսություն» մասնագիտական կրթական ծրագրի երկրորդ կիսամյակի մի շարք առարկաներ ՀԱԱՀ-ում դասավանդել են հույն դասախոսները:

■ **Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Գյուղարդյունաբերական քաղաքականության բաժնի աջակցությամբ ՀԱԱՀ-ի՝ Ռուսաստանի պետական ագրարային համալսարան – Կ. Տիմիրյազեւի անվան պետական գյուղատնտեսական ակադեմիայի հետ** համագործակցությունը, որի շրջանակում 2021-2022 ուստարում իրականացվել է ուսանողների առցանց փոխանակում: Կ. Տիմիրյազեւի անվան պետական գյուղատնտեսական ակադեմիայի 15 ուսանող ընտրել էր ՀԱԱՀ-ի «Գինու տուրիզմ» եւ «Գինու մարկետինգ ու բիզնես» դասընթացները, իսկ մեր ուսանողներն ընտրել էին Կ. Տիմիրյազեւի անվան պետական գյուղատնտեսական ակադեմիայի «Գինու որակի զգայաբանական գնահատման եւ ալկոհոլային խմիչքների արտադրության որակի կարգավորման շրջանակը» ու «Խաղողի եւ գինու քիմիա» դասընթացները: Դասընթացները հաջողությամբ ավարտած ուսանողների գնահատականները փոխճանաչել են երկու բուհերը:

## 2022 թ. ՀԱԱՀ-ի ընդունած միջազգային պաշտոնական պատվիրակությունները

Ավստրիական վարգացման գործակալության նորանշանակ պաշտոնյաների այցը

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի պատվիրակության այցը

EU-GAIA ծրագրի շրջանակում ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինի այցերը

Հայ-իրանական ագրոտեխնոլոգիական առաջին խորհրդաժողովի մասնակիցների այցը ԻԻՀ դեսպանի ղեկավարությամբ

## 2022 թ. ՀԱԱՀ-ի ընդունած միջազգային պաշտոնական պատվիրակությունները

Նիդերլանդների դեսպանի այցը

ՌԴ Պետդումայի պատվիրակության այցը փոխխոսնակի գլխավորությամբ

Արգենտինացի պտղաբույծ փորձագետների այցը
Արգենտինայի դեսպան Մարիանո Վերգարայի ղեկավարությամբ

Սթարմուս փառատոնի ղեկավար Գարիկ Իսրայելյանի այցը եւ հուշագրի ստորագրումը, հրավիրյալ դասախոսություններ փառատոնի շրջանակում

## 2022 թ. ՀԱԱՀ-ի ընդունած միջազգային պաշտոնական պատվիրակությունները

Ֆրեզնոյի պատվո հյուպատոսի այցը

ԱՄՆ գյուղդեպարտամենտի պատվիրակության այցը ԳԴ հայաստանյան ծրագրի 30-ամյակի միջոցառումների շրջանակում

Ռումինիայի գյուղատնտեսության եւ քաղաքաշինության նախարարության պատվիրակության այցը պետական քարտուղարի գլխավորությամբ

Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության (Sida)՝ Եվրոպայի եւ Լատինական Ամերիկայի դեպարտամենտի պատվիրակության այցը

## Միջազգային ճանաչման ընդլայնում

■ 2021-22 թթ. ՀԱԱՀ-ի՝ միջազգային ոլորտում գրանցած հաջողություններից է Եվրոպական համերաշխության կորպուսի (European Solidarity Corps) կողմից 8 տարի ժամկետով շնորհված Որակի նշանը, որի շնորհիվ հնարավորություն ունենք ընդունելու կամավորներ: Ընդ որում՝ նման որակավորում ունի հայաստանյան միայն երկու բուհ:

Միաժամանակ ՀԱԱՀ-ն, որպես գործընկեր, մասնակցել է էրասմուս+-ի կարողությունների վարգացմանը միտված 5 ծրագրի, Ագրարայինում հյուրընկալել է էրասմուս+ ազգային գրասենյակի կազմակերպած 2 հանդիպում, որպես համակարգող նախապատրաստել է 2 ծրագիր, ունեցել էրասմուս+ ՀԳ2 երկու ծրագիր, որոնցից մեկը՝ ՀԱԱՀ համակարգմամբ:

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

■ ՀԱԱՀ ուսանողական խորհուրդը շարունակել է կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ, կինոդիտումներ, ինտելեկտուալ խաղեր, էքսկուրսիաներ, խորհրդաժողովներ ու հանդիպումներ՝ նպաստելով բուհի ուսանողների բովանդակալից ժամանցի կազմակերպմանն ու ակտիվ ներգրավվածությանը մարզական, մշակութային, բնապահպանական, հասարակական կյանքին:

Սեպտեմբերի 13-ին, ելնելով սահմանային լարված իրավիճակից, ՀԱԱՀ-ում սկսվեց օգնություն հավաքելու գործընթաց՝ թիկունքից առաջնագիծ հասցնելու համար, իսկ սեպտեմբերի 18-ից սկսած ՀԱԱՀ ուսանողներն ու կամավորները սկսեցին պատրաստել քողարկիչ ցանցեր:

Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տանը ՀԱԱՀ ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպված «Ուսանողական գիտական շաբաթը» եզրափակող միջբուհական գիտաժողովին մասնակցել են ինչպես Ագրարային համալսարանի ֆակուլտետային գիտաժողովներին լավագույն զեկույցներով հանդես եկած ուսանողները, այնպես էլ ուսանողներ այլ բուհերից:

Հիշատակման արժանի հաջողություններից են նաեւ ՀՀ ֆուտվալի 2022-2023 բարձրագույն խմբի առաջնությունում եւ Vcup վոլեյբոլի առաջնությունում մեր համալսարանի «Թիմ Ագրո» ֆուտվալի եւ վոլեյբոլի թիմերի գրանցած լուրջ հաջողությունները: Երկու թիմերում էլ հանդես են եկել Ուսանողական խորհրդի անդամներ:

## Ուսանողական գիտական շաբաթ

■ *Մայիսի 23-ին մեկնարկած Ուսանողական գիտական շաբաթը ցույց տվեց, որ ՀԱԱՀ-ի՝ տասնամյակների օրինակելի փորձ ունեցող Ուսանողական գիտական ընկերությունը ոտք է դրել նորարարությունների, համարձակ մտահղացումների եւ դրանք իրականություն դարձնելու նոր փուլ: Ինչպես ռեկտոր Ուռուտյանը շեշտեց, նախաձեռնության նպատակն է քաջալերել երիտասարդներին գիտությամբ զբաղվելու, առանց որի անհնար է պատկերացնել երկրի անվտանգությունը:*

*Գիտական շաբաթվա առաջին օրը համալսարանի ճեմասրահում ցուցադրվեցին ուսանողների ստեղծած նորարարական սարքերն ու գյուտերը, պատրաստած համեղ ու բավական սննդամթերքը:*

*Գիտական շաբաթվա ավանդույթ է դարձել գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտներում կայացած երիտասարդ մասնագետների ներկայությամբ, նրանց օրինակով ու խոսքով ուսանողներին*

*ոգեւորելը, իսկ գիտության տարբեր ոլորտներում հաջողությունների հասած երախտավորների հետ հանդիպումները սերունդների միջեւ կապի ստեղծման ու ամրապնդման լավագույն ձեւն են: Շաբաթվա շրջանակում տարբեր ֆակուլտետներում տեղի ունեցան հանդիպում-սեմինարներ ագրարային ենթաոլորտների ներկայացուցիչների հետ՝ մասնագիտական փորձի փոխանակման, սննդի արժեշղթայում այդ մասնագիտությունների կարեւորությունը եւ համալսարանն ավարտելուց հետո մասնագիտական կարողությունների կարգացման առկա հնարավորությունները բացահայտելու նպատակով:*

*Գիտական շաբաթվա թեմաները բավական էին եւ ընդգրկում էին ագրոպարենային ու հարակից ոլորտների տարբեր ենթաոլորտներ: Ակնհայտ է ոլորտի նորագույն կարգացումների հետ համաքայլ ընթանալու՝ ուսանողների ձգտումը: Դրանցից շատերն արժանա-*

*ցան փորձագետների ուշադրությանը, իսկ լավագույն ճանաչված-ները՝ երկրի այլ բուհերի ուսանողների վեկուցումների շարքում ներկայացվեցին համալսարանի Զարթոնք հանգստյան տան ագրոճամբարում՝ Գիտական շաբաթվա ամփոփիչ երկօրյա գիտաժողովի ընթացքում՝ ընդհանուր առմամբ 30 վեկուցում:*

*Ամփոփիչ գիտաժողովի ժամանակ երիտասարդներին միացած ՀԱԱՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հրաչյա Ծպնեցյանը գիտության բնագավառում երիտասարդների գործունեության քաջալերումը, մասնավորապես՝ ուսանողական դրամաշնորհների եւ համալսարանի ագրոտեխնոլոգիական ստարտափների ինկուբատորի ընձեռած հնարավորությունների տեսքով, համարեց ագրոպարենային ոլորտի գլոբալ մարտահրավերներին դիմակայելու կարեւոր միջոց:*

*Գիտական շաբաթվա շրջանակում հիշարժան հանդիպումներից մեկն էլ հայաստանյան մի շարք բուհերի ՈՒԳԸ նախագահների այցելությունն էր Ագրարային համալսարան: Հանդիպումը սկսվեց ՀԱԱՀ-ի նորարարական լաբորատորիաներ եւ ջերմատուն շրջայցով, ապա շարունակվեց կլոր սեղան-քննարկմամբ:*

# ՖԻՆԱՆՍՆԵՐ

■ Հայաստանի ավգային ագրարային համալսարան հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը իրականացրել է ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Աուդիտը ներառում է 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, կուտ ակտիվներում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները:

Անկախ աուդիտորի կարծիքով՝ նշված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի եւ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային չափորոշիչների (ՖՀՄՍ):

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

PKF

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

PKF

ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 9/5, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի

ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 9/5, գրասենյակ 9, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

25. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴՆՊԵՐ

(ա) ԾՐԱԶԱԿ ՄՈՒԶԱՎԱՃԻՐ ՊԱՀՊ

(բ) ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

(գ) ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Հարկային պարտավորությունները Հայաստանում**

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները և կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Հիմնադրամի համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ » ՀԻՄՆԱԴՐԱՄ

Վարդան Ոսոյան

Մարիամ Պողոսյան

## Ֆինանսավորման աղբյուրները




## Իրականացված ծրագրերը



## ԴՈՆՈՐՆԵՐ ԵՎ ԱՋԱԿԻՑՆԵՐ

Կանաչ արահետ ՀԿ

«Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպություն

Հայ օգնության ֆոնդ (ՀՕՖ)

Հայաստանում Ճապոնիայի դեսպանություն

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ)

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր

ICARE հիմնադրամ

ԱՄՆ ՄԶԳ

Ավստրիական զարգացման գործակալություն

Վիշեգրադի միջազգային հիմնադրամ

ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում ծրագիր (EU GAIA)

Հայաստանի գիտության եւ տեխնոլոգիաների հիմնադրամ (FAST)

Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ

Սարյան Զառուգյան բարեգործական կազմակերպություն

Մարդը կարիքի մեջ (People in Need) ԲՀԿ

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ

Փառնագեան հիմնադրամ

Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամ

Հայկական բարեգործական ընդհանուր միություն

Հայաստանում Արգենտինայի դեսպանություն

ԱԿԲԱ ֆեդերացիա ՓԲԸ

Volkswagen հիմնադրամ

Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում

Գրեգ Բաղբաղյան, բարերար, Կանադա

**ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ**
**ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

# ՍԵՐՈՒՆԴ գինիներ

Վայելեք «ՍԵՐՈՒՆԴ» գինիները եւ միացեք ստեղծարար գինեգործների նոր սերունդներ կրթելու մեր առաքելությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Տերյան 74,
Երևան 0009, ՀՀ
(+374 10) 52 45 41
info@anau.am
pr@anau.am